

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻԻ Զ  
ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

|   |     |
|---|-----|
|   | Էջ  |
| 1. Խոբագրական. —                        |     |
| Կրօնաքերքիս Վեցանսեայ Հնրացք.           | 161 |
| 2. Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ. — |     |
| Անյիշատայ Չարգացունն Հաւատոյ ի Հայս.    | 165 |
| 3. Քարոյ. —                             |     |
| Հնագանդութիւն Աստուածային Կտակաց        | 169 |
| 4. Աղօթք.                               | 174 |
| 5. Կրօնական Դաստաւանդութիւն. —          |     |
| Մանկութիւն Յիսուսի.                     | 177 |
| 6. Բանք Խրատականք Անկեկայ Իմաստասիրի.   | 179 |
| 7. Թղթակցութիւն. — Նախակներ Անգղիայի.   | 187 |
| Նախակներ Ս. Երուսաղէմի.                 | 190 |
| Նախայ Հնդկաստանի.                       | 192 |

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն  
 տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Փրանք,  
 վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Փրանք թղթատարաւ:

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
 վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէ՛տք է ուղղել  
 առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

# Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Ր Ք

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե Ա Ս Տ ՈՒ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Ր Տ Ջ Ի

Մ ր ք ա գ ն ա գ ո յ ն Կ ա ր ր ո լ ի կ ո ս ի Ա մ Ե ն ա յ ն Հ ա յ ո յ

Թ Ի Ի 6

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր 1900

## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Կ Ր Օ Ն Ա Ք Ե Ր Ք Ի Ս Վ Ե Յ Ա Մ Ս Ե Ա Յ Ը Ն Ք Ա Յ Ք

Հանդիսիս ներկայ թիւը կը պարունակէ մի կարգ նամակներ զոր ընտրած ենք՝ մեզ ուղղեալ բաղմաթիւ նոյնիմաստ գրութիւններէ, ընտրութիւնը հիմնելով ոչ այնքան գրութեանց նիւթի վերայ, — որ բարեբախտապէս շատ չեն տարբերեր իրարմէ, — որքան՝ հեռաւոր երկրաց մէջ բնակեող հայ զաղթականաց կրօնական հայեացքներն ու բաղձանքներն յերեւան բերելու մտօք: Սոյն թըղթակցութեանց մէկ մասն եւս յաջորդ թուոյն մէջ պիտի հրատարակուի: Մեր բարի նպատակն կատարելապէս իրագործած լինելու յաւակնութիւնը չունիմք. երանի՛ թէ մեր աղգի եւ եկեղեցւոյ աւելի կարող գրադէտներ կրօնաթերթի մը անհրաժեշտութիւնը զգային, որպէս զի հարկ չմնար որ հայաբնակ կեդրոններէ հեռու, բաղմադիմի գժուարութեամբ չըջապատեալ, մի թաղային քահանայ ստանձնէր այդ ծանր պաշտօն: Միւս

կողմանէ ոմանք լրագիրք աշխատած են զմեզ համոզելու թէ կրօնն տարբեր կերպով ըմբռնելու է քան զոր ըմբռնած ենք մեք: Մեզ ուղղեալ քաջալիբրական նամակներէ աւելի կըքաջալերեն զմեզ այս կարգի հակառակ յօդուածներ եւ լիովին կ'արդարացնեն կրօնաթերթիս գոյութիւնը: Նոքա յակամայիցս յերեւան կըբերեն մեր ժողովրդեան մէկ զասակարգի տխուր վիճակն. նոցա հոգւոց վէրքերը կըբանան մեր առջեւ. մտքի զարգացման թելքութիւնները կըյայտնեն: Կրօնաթերթի մը համար անգին ստացուածներ են սոքա, եւ մինչեւ իսկ աւելի պիտանի կըհամարենք քան թէ մեր բարեկամաց քաջալիբրական խօսքեր. կորուսեալ ոչխարի հետքերն են սոքա, միւսներն իննսուս եւ ինն ոչխարներն են «որք ոչ են կորուսեալ»: Մի որ եւ է կրօնաթերթի նպատակ լինելու է՝ ընթերցողաց բարեպաշտական զգացումներն զարթուցանել եւ վառ պահել, իւր բոլոր յօդուածոց եւ հրատարակութեանց մէջ ուղղակի կամ անուղղակի կերպիւ միայն մէկ նպատակ ունենալ՝ հոգւոյ փրկութեան առաջնորդել զընթերցողան: Այս դժուարին պաշտօնավարութեան միջոցին յայտնի է որ ոմանք պիտի ծաղրեն, այլք պիտի զայրանան, իսկ այլք անտարբեր պիտի մնան, ինչպէս յաւուրս երկրաւոր անօրէնութեանց Փրկչին հրէից ազգի տարբեր գասակարգի անձինք տարբեր կերպով կըմբռնէին Քրիստոսի քարոզութիւնն: Ինչպէս յայնժամ նոյնպէս եւ այժմ, երկնից արքայութեան սերմերն «է որ անկանի առ ճանապարհաւ, այլն անկանի յապառաօթի, եւ այլն՝ ի մէջ փշոց, եւ այլն՝ յերկիր բարի»: «Ճանապարհն» ու «ապառաժն» ու «փուշն» Քրիստոսի աշակերտաց համար որ եւ է արգելք չէ Ս. Աւետարանի սերմերը յանելու: Թող որ «երկիր բարի» եւս կայ, որոյ վերայ քրիստոսաւանդ սերմերը կրնան աճել ու զարգանալ, յայտնի է որ Աստուծոյ շնորհքն կարող է խոպան ու ապառաժ երկիրն կակղացնել, փուշերն արմատախիլ առնել եւ բարեբեր չիմնել:

Ս. Աւետարանն մի ներքին զօրութիւն ունի, որ քարոզիչէն բոլորովին անկախ կերպով կրնայ ազդել եւ ներգործել ունկնդրաց վերայ: Քարոզիչն միայն գործիք մի է ի ձեռս Աստուծոյ, որով իւր սուրբ կամք կրկատարուի. եւ ընդհանրապէս աշխարհիս ամենէն արհամարհեալներն են որոց ձեռամբ կըսիրէ Աստուած իւր ճշմարտութիւնը տարածել եւ հաստատել: «Չյիմարս աշխար-

հիս ընտրեաց Աստուած , զի յամօթ արասցէ զիմաստունս . եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած , զի յամօթ արասցէ զհօրսս» : Ս. Աւետարանի ներքին զօրութեան այս գիտակցութիւնը զմեզ կըստիւզէ կրօնաթերթիս մէջ ամենակարեւոր անզը սալ մեր սուրբ կրօնի պարզ ու մերկ ճշմարտութեանյ , առանց ակնածելու «ներկայ դարուս» պահանջներէն : Արդէն երկու հալար սարւով յաւաջ փարիսեցիք եւ դպիրք նոյնպէս քմահաճ բաներ կըպահանջէին մեր Փրկչէն . կըսպասէին որ երկնից արքայութեան պատգամն յարմարցնէր հրէից քմահաճոյից . նոյնը պահանջեցին եւ հեթանոսք . բայց ի վերջոյ երբ Ս. Աւետարանն յաղթող գտնուեցաւ , հրեայք եւ հեթանոսք ստիպուեցան համակերպիլ եւ յարմարիլ յաւիտենական ճշմարտութեան , որ անփոփոխ է :

Այսու հանդերձ աչքերնիս չենք գոցեր մեր ժամանակակից աշխարհի վերայ . եւ առանց մեր գլխուտը պաշտօն ու նպատակ նկատելու , միշտ պատրաստ եմք ըստ կարի մերում ջանալ կրօնական կասկածներ փարատել , թիւրիմացութիւններ ուղղել , մեր կրօնի կամ եկեղեցւոյ դէմ ուղղեալ թշնամական յարձակումներ լրջօրէն քննել եւ առարկութեանց իրական արժանիքն ի վեր հանել : Բայց , դարձեալ կըկրկնեմք , քննադատութիւն կամ վիճաբանութիւն չէ մեր գլխուտը պաշտօն . մեր ընթերցողաց մէջ բարեպաշտութիւն եւ կրօնի սէր տարածելն է մեր գլխուտը նպատակ :

Մինչ զարդ թերթիս դէմ գրուած բազմիջեան առարկութեանց միայն մէկն պատասխանի արժանի գտած ենք . այն է թէ ինչո՞ւ գրաբառախառն աշխարհաբառ գործ կ'ածուի փոխանակ Կ. Պօլսոյ մէջ խօսուած բարբառին : Որքան որ Կ. Պօլսոյ աշխարհաբառն ամենէն աւելի տարածուած հայ գաւառաբարբառն է , պէտք չէ մոռնալ որ մեր ազգի տարբեր հատուածներ եւ դաղութիւններ տարբեր բարբառներ գործ կ'ածեն , եւ Կ. Պօլսոյ բարբառի այլ եւ այլ ոճերն այդ գաղութիւններին շատ աւելի խորթ եւ անհասկանալի են քան թէ գրաբառի պարզ ոճերն զոր ամեն օր յեկեղեցւոյ եւ առանձին ազօթից միջոցին կըլսեն ու կըկարդան : Կ. Պօլիսն ամենամեծ հայաբնակ քաղաքը նկատելով հանդերձ եւ միանգամայն աչքի առնջ ունենալով որ մեր ընթերցողաց մեծագոյն մասն Տաճկաստանցի են եւ արեւմտեան բարբառին վարժուած են ,

դարձեալ չպիտի մեր Ռուսահայ, եւ Պարսկահայ  
 եւ Հնդկահայ ընթերցողներ անտես առնենք: Տաճկահայոց  
 բարբառն մեր հետեւած լեզուին իբրեւ հինն զնելով,  
 գրաբառէն զուրս եւ մեր Ռուսահայ եւ Պարսկահայ եղբարց  
 անհասկանալի ոճերի ու դարձուածների փոխարէն մեր ե-  
 կեղեցւոյ հասարակաց լեզուի ոճեր եւ դարձուածներ գործ  
 կ'ածեմք, յուսալով այսու մեր ընթերցողաց մեծագոյն  
 մասին փոքր ի շատէ գոհացում տալ: Մի եւ նոյն ժա-  
 մանակ Տաճկահայ որպէս եւ Ռուսահայ հեղինակներէ  
 գրուած յօդուածներ նոյնութեամբ կըհրատարակեմք իւ-  
 բաքանչիւրն իւր սեփական բարբառով: Մինչեւ իսկ  
 կըխորհինք երբեմն քարոզներու տաճկերէն թարգմանու-  
 թիւնն եւս ժամանակ առ ժամանակ հրատարակել յօդուտ  
 տաճկախօս մերազնէից: Յամենայնի Աստուծոյ փառքն  
 եւ մեր սուրբ Եկեղեցւոյ օգուտն է մեր նպատակ եւ մեր  
 պարծանք:



## Ա Ի Ա Ն Պ Ո Ի Ք Ի Ի Ն Է Ա Յ Ա Ս Տ . Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

ԱՆՅՈՒՇԱՏԱՆԿ ՁՍԻԳԱՅՈՒՄՆ ՀԱՒԱՏՈՅ Ի ՀԱՅՍ .

1. Պատճառք թուրքեան պատմագրաց . — Սրբոց Ոսկեանց եւ Սուքիասանց դէպքէն զատ մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շատ քիչ ակնարկութիւններ կը գտնեմք պատմութեան մէջ քրիստոնէական կրօնի զարգացման եւ ընթացից նկատմամբ ի Հայո : Բայց եւ այնպէս եղած ակնարկութիւնք ըստ բաւականին կը յայտնեն որ Քրիստոսի հաւատն Հայոց մէջ Ս. Առաքելոց ժամանակէն մինչեւ Ս. Լուսաւորիչ անընդհատ տեւեց եւ տակաւ առ տակաւ զարգացաւ . երկնից արքայութեան խմորն թագուցեալ ձեռամբ Սրբոցն Թաղէոսի եւ Բարթոլղիմէոսի ի գրիւս երիւսալէր Հայաստան աշխարհի չէր կարող անշարժ եւ առանց ներգործութեան մնալ մինչեւ բովանդակ հայաստեւ ազգն Աւետարանի ճշմարտութեամբն խմորուէր : Այլ թէ ի՛նչ է բուն պատճառն որ այս ժամանակամիջոցի պատմական անցքեր անյիշատակ մնացած են՝ դժուար է որոշել : Բայց եթէ այն միջոցի քաղաքական դրութիւնը մեր աչքի առաջ ունենանք, կրնանք գուշակել մի քանի հաւանական պատճառներ : Նախ՝ մեր ազգային պատմութիւնն ընդհանրապէս Բ եւ Գ դարուց մէջ այնքան անորոշ եւ խառն ի խուռն է եւ այնքան տարբերութիւն կը դրտնեմք մեր ազգային պատմչաց եւ օտարազգի ժամանակագրաց միջեւ, որ բնական է մեր եկեղեցական պատմութիւնն ունի անստուգութեան եւ անյայտութեան մէջ գտնել յորում քաղաքական պատմութիւնը կը գտնուի : Երկրորդ՝ այս անստուգութիւնը առաւել եւս կը նստեցնեն առաջին երեք դարուց մէջ ընդհանրապէս հեթանոս թագաւորներէ ուղղեալ սաստիկ արգելքն ու հալածանքն ընդգէմ քրիստոնէութեան, որով սուրբ հաւատն ի թագըստեան կը մնայր, եւ ամեն ջանք ի գործ կը դրուէր հաւատացելոց որպէս եւ հաւատալեաց պարագայներ ծածկել հալածողներէ :

Երրորդ՝ Ս. Գրիգորի քարոզութիւնն այնքան մեծ ար-

գիւնք ունեցաւ, եւ Տրդատայ շնորհիւ քրիստոնէական կրօնի վայելած ազատութիւնն այն աստիճան հիացոյց եւ գրեթէ շլացոյց մեր ազգային պատմագիրներ, որ յակամայիցս անտես արին Ս. Գրիգորէն յառաջ եղած քրիստոնէութեան պատմութիւնն կամ գոյութիւնն. սուրբ նախանձայուզութեամբ իմն Ս. Գրիգորի գործերը ծայրայեղօրէն պատմեցին՝ անեկայն ինչ նմա վերագրելով, որում արգարիւ բազում ինչ պարտիմք: Չորրորդ պատճառ մի թերեւս այն է որ նախ քան զգիւտ հայկական գրոյն, մեր նախկին եկեղեցւոյ պատմութեան այժմ անծանօթ մասերն օտար լեզուաւ կամ նշանագրաւ գրուած լինելով՝ գիւրաւ ի կորուստ մատնեցաւ, նման բազում այլ պիտանի գրուածոց նախնեաց:

2. Մեհրաժան Եպիսկոպոս Հայոց:—Եւսեբիոս եկեղեցական պատմագիրն (ի Ե պարութեան գլ. 46) կը պատմէ Դիոնէսիոս Աղեքսանդացւոյ մասին թէ Դեկոս կայսեր ժամանակ բազում չըջարեակաւ թուղթեր գրեց այլ եւ այլ երկրաց մէջ գտնուող եկեղեցեաց եւ քրիստոնէից: Այս առթիւ, կ'ասէ, «նոյնպէս եւ առ Հայս գրեաց վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մեհրութան»: Աւա՛ղ որ եկեղեցական պատմահայրն ուրիշ եւ աւելի մանրամասն սեղեկութիւն թողած չէ հայկական եկեղեցւոյ մասին: Մեհրութան հայազգի եւ Հայոց եպիսկոպոս էր: Երբ խօսքն երրորդ դարու Հայոց ազգի եւ նոցա «եպիսկոպոսի» վերայ է, պէտք է հասկանամք որ փոքր ի շատէ կազմակերպեալ եւ ծանօթ եկեղեցւոյ կ'ակնարկէ պատմիչն: Մեհրութան գլխաւոր եպիսկոպոս մի էր, Հայոց կաթողիկոսն էր, եւ մի զժուար կրօնական խնդրոյ առթիւ իւր երէց պաշտօնակցի՝ Աղեքսանդրիոյ Դիոնէսիոս հայրապետին խորհուրդ կը հարցնէ: Հալածանաց ժամանակ ոմանք յերկիւզէ ուրացած էին իւրեանց հաւասն, այլ յետոյ զըջացած էին եւ նորէն եկեղեցւոյն գլխաւոր կ'ուղէին ի հալորդակցութիւն ընդունուիլ: Ոմանք եպիսկոպոսունք ուրացութիւնն մի այնպիսի ծանր մեղք համարած էին որ ուրացողներն այլ եւս չէին ուզեր յեկեղեցի ընդունել, զյանցաւորան Աստուծոյ դատաստանին թողլով: Իսկ այլք աւելի ներողամտութեամբ զյանցաւորան երկարժամանակեայ ապաշխարութեան կ'ենթարկէին եւ յետ այնու կ'ընդունէին ի հա-

զորդութիւնն Ս. Եկեղեցւոյ : Մեր Մեհրուժան Եպիսկոպոսն տեսնելով որ իւր թէմի մէջ եւս կըգանուին բազում զըջացեալ ուրացողք որ կըթախանձեն նորէն քրիստոնէական շնորհաց արժանանալ , եւ տարակուսանաց մէջ լինելով թէ ի՛նչ ընթացք բռնելու է, կըդբէ Ս. Դիոնէսիոսին, որ, ինչպէս ուրիշ ալբիւրէ յայտնի է, աւելի մեղմ եւ ներողամիտ սովորութիւնը կ'առաջարկէ մեր Եպիսկոպոսին : Արդէն այն պարագայն որ Ս. Մեհրուժան իւր վիճակին մէջ ուրացողներ ունէր՝ այլ իմն ապացոյց է որ քրիստոնէութիւնն ըստ բաւականին տարածուած էր այն սահմանաց մէջ եւ տեղական իշխանութիւնը իւր զէմ գրգռած էր, որ զհաւատացեալսն հալածելով՝ ուրացութեան տեղի տուած էր :

3. Նահասակորիսն ֆրիսոնեից ի Հայս յառուս Խոսրովու առաջնոյ :—Նախընթաց յօդուածոյն մէջ ակնարկեալ Մովսէս Խոսրենացւոյ յիշատակութիւնն ի մասին գրուածոց Փերմելիանոսի Եպիսկոպոսի Կեսարու Կապաչովկացւոյ՝ կրկին կընստտատէ Ս. Աւետարանի ընդարձակ տարածումն Հայոց մէջ յերրորդ դարու, եթէ Փերմելիանոսի վկայարանութիւնը մեր ձեռք հասած լինէր, պիտի ունենայինք պատմութիւնն այն բազում վկայից «որք մարտիրոսացան ի Խոսրովու ի մերում աշխարհիս» : (Մովս . Խոր . Պատ . Հայոց , ՀԵ) : Երբ թաքսւորներ յալածանք կըյարուցանեն ընդդէմ մի կրօնի , այդ պարագայն ինքնին յայտնի վկայութիւն է՝ նոյն կրօնի բաւականաչափ տարածման , յորմէ պետական իշխանութիւնը վախնալով թէ մի գուցէ ժողովրդեան կրօնական յեղաշրջման հետ քաղաքական խռովութիւններ եւս խառնուին , կ'աշխատի ազդու եւ բռնի միջոցներով նորա տարածման առաջն առնել :

Թէպէտ եւ ստոյգ եւ անընդհատ պատմական աղբիւրներ կըպակասին այս դարու նահատակութեանց եւ նահատակաց մասին , դարձեալ մեր որպէս եւ յոյն ու լատին եկեղեցւոյ մատենից , ճառքնտրաց եւ յայսմաւուրաց զգուշաւոր քննութեամբ կարելի է հարիւրաւոր հայազգի եւ հայանուն մարտիրոսաց եւ խոստովանողաց յիշատակութիւնը գտնել , որոյ մէկ գեղեցիկ փորձը կընեկայացնէ Հայր Ալիշան Բազմալիկայի ներկայ տարւոյս Օգոստոսի թուոյն մէջ :

4. Վախճան առաջին շրջանի պատմութեան Հայ. Եկեղեցւոյ:— Հայ. Եկեղեցւոյ պատմութեան առաջին շրջանը կ'աւարտի աստ, եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի երեւմամբն մի բոլորովին նոր շրջան կըսկսի. նոր՝ ոչ թէ միայն քաղաքական այն նպատաւոր պարագայից շնորհիւ որով քրիստոնէութիւնը վերջնապէս Հայոց ազգի եւ արքունեաց կրօնը դարձաւ, այլ նաեւ սահմանադրութեան, Եկեղեցական ծիսից եւ արարողութեանց մասին: Սուրբ Գրիգորի քարոզութիւն՝ թէպէտ եւ էական խնդրոց եւ իրաց մէջ նոյն էր որպէս Ս. Թադէոսէն եւ Ս. Բարդուղիմէոսէն աւանդեալ եւ մինչեւ երրորդ դարու վերջերն ընկալեալ եկեղեցին ի Հայս, դարձեալ տարբեր երկրաց եւ տարբեր ազգաց մէջ զարգացած երկու եկեղեցեաց եւ պարագայից տարբերութիւնը կար: Մէկ խօսքով Ս. Գրիգորի՝ Կեսարիայէն բերած յունական ազգեցութիւնը իշխեց հին հայկական սովորութեանց վերայ: Երբ կըտեսնեմք որ Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ մեր եկեղեցւոյ կարգ ու կանոն, ծէսք եւ արարողութիւնք գրեթէ ամբողջովին յունական (Կեսարիոյ) եկեղեցւոյ դրոշմ կըկրեն, զարմացմամբ կըհարցենք թէ՛ նախ—Գրիգորեան եկեղեցին ի՞նչ պէս էր: Այս հարցումն պէտք է յաւիտեան անպատասխան մնայ: Ոմանք մեր երկրի մէջ ժամանակ առ ժամանակ երեւցող Պաւլիկեան եւ Թոնգրակեան աղանդներն ցոյց տուած են իբրեւ հետք Թադէոսեան եւ Բարդուղիմէոսեան քրիստոնէութեան, որ կարի անհաւանական է: Ինչ որ լինի տարբերութիւնը, Հայ. Եկեղեցւոյ պատմութիւնն ուսումնասիրողի համար անհրաժեշտ է գիտնալ որ այս մեծ տարբերութիւնը կայ: Ս. Լուսաւորչէն սկսեալ պատմութիւնը տարբեր աչքով ըմբռնելու է քան թէ առաջին երեք դարուց անցքեր: Բայց եւ այնպէս արտաքին ձեւի ու տեսակի տարբերութեամբ հանդերձ պէտք է խոստովանիլ Ս. Աւետարանի միութեան ոգին որ կըտիրէ յամենայն ուղղափառ եկեղեցիս քրիստոնէից յամենայն դարս պատմութեան եկեղեցւոյ, եւ աստուածային նախախնամող ձեռքն որ կ'առաջնորդէ իւր սուրբ հօտն ըստ տէրունական խոստման թէ՛ «Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»:

## ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՄԱՑ

(Երուսաղեմացի նորընծայ վարդապետէ տգրուած)

«Ոչ ամենայն որ ասէ ցիս Տէ՛ր, Տէ՛ր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինս է» (Մատթ. Է. 21.):

Ա՛յս է այն փառաւոր վարձատրութիւնը խոստացուած անոնց՝ որոնք հաւատարմութեամբ կրկատարեն Տիրոջ կամքը. եւ որոնց վարձքը պիտի ըլլայ երկնից արքայութիւնը: Մեր ամենաբարի արարիչն Աստուած չուզեր որ իւր արարածները իրեն ծառայելով զուր եւ անօգուտ յարգանք մը մատուցած ըլլան, այլ կ'ուզէ առատօրէն վարձատրել եւ ժամանակաւոր ծառայութեան փոխարէն պարգեւել յաւիտեանական փառք եւ երանութիւն:

Ո՞վ չուզեր այսպիսի Տիրոջ մը հնազանդ եւ անձնուէր գտնուիլ: Սակայն զժբազդաբար շատ անգամներ կը տեսնենք որ Աստուծոյ վերին եւ երկրպագելի կամքը չը կատարուի միշտ, Անոր պատուէրները հաւատարմութեամբ չեն պահուիր, եւ շատ յաճախ իւր ապերախտ եւ ապստամբ արարածները կարեւորութիւն չեն տար իրենց վերապահուած անսահման փառքին եւ իրենց հաւատարմութեան փախարէն խոստացուած վարձատրութիւններուն: Մինչդեռ մարդիկ աննշան թոշակով մը իրենց նման մարդոց ծառայներ կը ըլլան, չեն ուզեր սակայն հնազանդել Աստուծոյ. մինչդեռ իրենց քրտինքը, ջանքը, աշխատութիւնը աննշան վարձքի մը փոխարէն կուտան, չեն ուզեր նուիրել զայնս Աստուծոյ, որոնց փոխարէն կը խոստանայ՝ երկնից արքայութիւնը տալով վարձատրել: Միթէ մարդոց համար ասկէ աւելի վնասակար եւ նախատալից բան մը կա՞յ: Ո՞վ չի ողբար այսպիսի չարիքի մը վրայ, որ մարդուն զժբազդութեան պատճառ եղած է: Այս չարիքը պիտի վերնար իսպառ աշխարհի երեսէն եթէ մարդիկ հասկնային թէ Աստուծոյ կամքը կատարելուն մէջ կը կայանայ իրենց ըտլոր մեծութիւնը, երջանկութիւնը, օգուտը, փառքը եւ պատիւը:

Այս համառօտ քարոզովս ցոյց պիտի տամ ձեզ ըսած իս ճշմարտութիւնը. եւ իցիւ՝ թէ իմ այս տկար խօսքերս ազդէին ձեր սրտերուն եւ խոնարհեցնէին ձեր կամքերը Աստուծոյ վերին եւ երկրպագելի կամաց առջեւ:—

\* \* \*

Աշխարհային իշխաններու սպասաւորները կը հպարտա-

նան անոնց ծառայութեան մէջ գտնուելնուն եւ արքունական համազգեոտներ հագնուելնուն համար եւ ասով իրենց վրայ ունենալ կը կարծեն ցոլացումը այն մեծութեան, որուն մօտ կը գտնուին: Բայց ի՞նչ նշանակութիւն ունին աշխարհի բոլոր այս մեծութիւնները յաչս Աստուծոյ, բաղդատելով իւր վեհ եւ անճատելի փառքին հետ. եւ միթէ կարելի՞ է այս ամենը համեմատել այն պատուոյն որ իրեն ծառայողներուն խոստացուած է: Աստուծոյ ծառայել կը նշանակէ բուն իսկ թագաւորել, թոթուել իւր վրայէն քմահաճոյքները, մոլութիւնները, մարդկային կամքէն արոտարուած բռնութիւնները. եւ իշխել անպատուող եւ աւերիչ կըքերուն վրայ. այս բանը ոչ թէ ծառայութիւն, այլ իսկապէս աղատութիւն է:

Այսպէս բոլոր արարածները ենթարկուած են աստուածային կամաց. բացարձակ օրէնք մ'է այս, զոր ամեն ոք պարտական է յարգել եւ ոչ մէկը կրնայ այդ օրինաց հարկէն ինքզինքն ազատել: Մաքուր հոգիներու բնակավայրը եղող երկնից մէջ հրեշտակներն Աստուծոյ երկրպագելի կամաց պաշտօնեայներն են. եւ անոնց թեթեւաշարժութեան խորհրդանշանը եղող թռչնոց թեւերով նկարուելուն պատճառն է՝ ցոյց տալ այն պատրաստականութիւնը, որով կը կատարեն անոնք Տիրոջ կամքն ու հրամանները:

Երկրի վրայ սողացող աննշան որդը, իր աստիճանին մէջ, նոյն բանը կընէ, ինչ որ գերագոյն իմացականութեան մարմնացումը եղող հրեշտակները՝ երկնքի մէջ: Որդերը կը սողան հողին վրայ եւ կը ճաշակեն զայն մի միայն որովհետեւ Աստուած այդպէս կամեցած է: Մեծն Աստուած հրամայած է արեգակին որ իւր թաւալումներով ցերեկուան եւ գիշերուան, տարիներու եւ դարերու շրջանը որոչէ, եւ արեգակը երբէք դուրս չէ ելած անոր կամքէն: Իւր խորութիւններով եւ ընդարձակածաւալ տարածութեամբը պատկառանք եւ սարսափ ազդող ովկիանոսին ըսած է. « Ի՞նչ սահմանդ մինչեւ այստեղ է, ասկէ անդին չ'պիտի անցնիս » եւ ովկիանոսը իւր լեռնանման կատաղի ալիքները կը խոնարհեցնէ իր եզերքի աւազնւրուն առջեւ:—Ամեն բան Անոր կը հպատակի, թէ՛ աստղերու շարժումը, թէ՛ բուսականութեանց աճումը, աշխարհի չորս ծայրերէն շնչող հողմերը, երկինքէն իյնող անձրեւները, կենդանութիւն պարգեւող ջերմութիւնը,

մինչեւ անգամ այն հողն ու փողին, որուն վրայ կը կոխենք . ասոնք ամենքն ալ Բարձրելոյն կամաց համեմատ կը շարժին :—Աստուծոյ այս հրաշալի կարգադրութենէն յափշտակուած թագաւոր մարգարէն Դաւիթ կը զօչէ . « Ո՛րքան մեծ են Աստուծոյ գործերը , եւ ի՞նչ գեղեցիկ ներշնչակութեամբ կը կատարեն Անոր հրամանները » :

Երկրի վրայ Աստուծոյ արարչագործութեան գլուխ գործոցը մարգն ալ ստեղծուած է միայն իւր Արարչին կամքը կատարելու եւ իւր հանգիստաւոր ու հօր ձայնը տիեզերական մեծ երգակցութեան միացնելու : Յայդմ կը կայանայ իւր պարտականութիւնը , ինչպէս նա եւ իւր փառքը : Ամենքնիս ալ աղէկ կը հասկնայինք զայս եթէ չար հրեշտակը մեր սրտերուն մէջ ներշնչած չըլլար ապրտամբութեան ոգին եւ ինկած չըլլայինք այն պատուէն ուր բարձրացուցած էր մեզ Աստուած : Այդ պատիւը կրկին ձեռք բերելու եւ մեր ճակատներէն ինկած այդ փառաց պսակը վերստանալու համար մէկ միջոց միայն ունինք . այն է՝ ելնել մեր ապրտամբ եւ անհնազանդ վիճակէն եւ մտնել Աստուծոյ ծառայութեան մէջ . այսինքն հնապանգել անոր՝ կատարելով միշտ իւր երկրպագելի կամքը :

Ահա ասոր համար Յիսուս Քրիստոսի մեզ սովորեցուցած նիւնալի ազօթքին մէջ կըսենք ամեն օր . « Եղիցին կամքքո , որպէս յերկինս եւ յերկրի » : Երկինքը , ուր երանելիները Աստուծոյ քաղցր ներկայութիւնը կը վայելեն եւ կը տեսնեն զայն իւր անսահման կատարելութեան մէջ , Անոր կամքին համաձայն կը շարժին , իւր հրամանները կը կատարեն եւ երջանիկ են կատարելապէս : Մենք ալ այդ փառքն ու երանութիւնը վայելելու սահմանուած ենք եւ այս աշխարհիս մէջ իսկ կրնանք իւր աստուածային փայլովը ճառագայթել , եթէ հաւատարմարար կատարենք Նորա օրհնեալ կամքը : Այս նկատումով է որ սուրբ մը ըլլած է . « Մեր կամքը Աստուծոյ կամաց համաձայնեցնել , կամենալ ինչ որ Նա կը կամենայ , կընշանակէ Անոր նմանող ըլլալ » : Եւ Աստուածորդին Յիսուս իսկ աշխարհի վրայ ապրած ատեն հռչակեց թէ՛ եկած է ոչ թէ իւր , այլ զինքը զրկողին կամքը կատարելու . եւ երբ օր մը անօթի եղած ժամանակը աշակերտները կ'ստիպէին զինքը հաց ուտել , ըսաւ , « Ի՞մ կերակուր այն է՛ զի արարից զկամս այնորիկ որ առաքեացն զիս » : Եւ արդարեւ կատարեց Նա հօր Աստուծոյ կամքը մինչեւ անարգ խաչափայտին վրայ իւր

աստուածային անձը զոհելու աստիճան: Ասկէ աւելի անսահման հնազանդութիւն չէր կրնար ըլլալ: Եւ ասով ինքզինքը հնազանդութեան գերազոյն օրինակը ընծայեց մեզի, որուն նմանելով պիտի կրնանք մենք ալ հասնել ճշմարիտ եւ իրական մեծութեան եւ երջանկութեան:

\* \*

Ինչպէս ըսի, երջանիկ ըլլալու համար է միայն որ Աստուած ստեղծած է մեզի, եւ մարդը պարտաւոր էր ապահովել իրեն այդ երջանկութիւնը իւր՝ դէպի Արարիչն ունեցած հաւատարմութեամբը: Լիացած բնութեան հարուստ պարգեւներով, իրեն կըմնար միայն հնազանդել Արարչին՝ հասնելու համար յաւիտենական երանութեան: Բայց մարդը պարտադանց գանուեցաւ եւ ատով իր եւ իր սերնդոց վրայ Աստուծոյ անէծքը հրաւիրեց:

Ժողովուրդք Աստուծոյ, մենք երջանկութեան համար ստեղծուած ըլլալով՝ այդ բարին պէտք է փափաքինք, երջանկութեան ծարաւի պէտք է ըլլանք, որովհետեւ այդ իսկ է նպատակը եւ վախճանը որուն պարտաւոր ենք ձգտիլ: Բայց դժբաղդաբար այդ բանին հասնելու համար մեր ընտրութեանց մէջ կը խաբուինք յաճախ: Կըմտնանք որ երջանկութիւն կարելի չէ գտնել աշխարհային սնտեաց մէջ, թէ՛ ատոր աղբիւրը Աստուած է միայն եւ թէ՛ ամեն բարիք եւ երանութիւն Անկէ կը բխին: Այսպէս հեռանալով մեր նպատակէն, կը հեռանանք նաեւ մեր երանութենէն, նախամեծար համարելով մեր կամքը աստուածային կամքէն: Մեղքի հետեւանքը եւ պատիժը եղող դժբաղդ ցանկութիւններով դէպ 'ի արարածները յարած ըլլալնուս, արարածներուն մէջ կը փնտռենք մեզի տանջող ծարաւին յագուրդը: Երջանկութիւն կը խնդրենք մարդոցմէն, ժամանակաւոր մեծութիւններէն, որոնք մեզի կուտան փառասիրութեանց տենդը, փափաքներու դառնութիւնը, ու կը նմանին թեթեւ եւ խաբուսիկ ծուխի, զոր շունչ մը կարող է ցրուել եւ անհետացնել: Երջանկութիւն կը փնտռենք այնքան նեղութիւններով ձեռք բերուած եւ մտայուզութիւն պատճառող հարստութեանց մէջ, որոնք օր մը կ'ոչնչանան, իրենց ետին ձգելով դատարկութիւն, վիշտ, յափրանք եւ տաղտուկ, եւ յետոյ կ'աներեւութանան մահուան անդունդին մէջ: Երջանկութիւն կը փնտռենք վերջապէս նուաստացնող ու խաբուսիկ

հաճոյքներու մէջ, որոնք միտքերնիս եւ իմացականութիւննիս մեր զգայարանքներուն հնազանդեցնելով, դառն եւ ամօթալի գերութեան մը կը մատնեն մեզի :

Բայց որքա՛ն տարբեր է երբ աստուածային կամքը կըլլայ մեր կեանքի օրէնքը, մեր բոլոր մտածումներուն, փափաքներուն եւ գործքերուն կանոնը : Այն ատեն կատարելապէս կարգապահութիւն եւ խաղաղութիւն կը տիրէ մեր մէջ : Յաստուած միայն պէտք է փնտռենք ոյժ եւ օգնութիւն, հնազանդելով Նորա ամենասուրբ կամաց : Երանելի նահապետն Յոբ իւր բոլոր զաւակներն ու ստացուածքները կորսնցնելէն վերջը, իրեն այցելութեան եկող երեք բարեկամներուն այս զարմանալի խօսքն ըսաւ. « Աստուած տուաւ եւ Աստուած առաւ, օրհնեալ ըլլայ Նորա կամքը » : Ինչ հետեւանք ունեցաւ սակայն . Աստուած վարձատրեց իւր ծառային հաւատարմութիւնը կրկնապատիկ հարստութիւն պարգեւելով եւ առաջինէն աւելի բազմաթիւ գերգաստանի մը երջանիկ հայրը ընելով զինքը :

Մենք ալ ուրեմն, սիրենք, յարինք Աստուծոյ բարձր եւ պաշտելի կամքին . թող իր վերին կամքն ըլլայ մեր անյեղլի կանոնը եւ մեր կեանքի ու մահուան առաջնորդը : Կիտանք մենք մեզի ըսել թէ՛ եթէ ունինք կամք մը, զայն յաւէտ պէտք է հպատակեցնենք ուրիշ վերին կամքի մը . իսկ եթէ հակառակինք, ապաստամբներեղած կըլլանք, հետեւաբար եւ դժբաղդ : Մեր կամքը պէտք է խոնարհի Աստուծոյ կամաց առջեւ, որովհետեւ Աստուած է տէրը եւ մենք Անոր որդիներն ենք, քանի որ Նա ստեղծած է զմեզ : Մինչդեռ Աստուծոյ կամքը երկինքն ստեղծեց, արարածոց կամքը պատճառ եղաւ դժոխոց գոյութեան : Այս բանին ակնարկելով սուրբ մը կըսէ. « Վերցուցէք մէջտեղէն մարդոց կամքը . այն ատեն դժոխքը գոյութիւն չունենար » :

Աստուածային կամաց հնազանդութեան վսեմ օրինակը մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս ինքը տուաւ մեզ, երբ իւր մատնութեան զիչերը աչքին առջեւն ունենալով իւր չարչարանաց դառնութիւնն ու սոսկումը, կըսէր, « Հայր, եթէ հնար է, հեռացուր այս բաժակը ինձմէ », յետոյ կաւեցնէր . « սակայն ոչ թէ իմ, այլ քու կամքդ թող ըլլայ » :

Մենք եւս, ինչ որ ալ լինի, ըսենք շարունակ . « Քու կամքդ թող ըլլայ, ով Տէր, եւ ոչ թէ մերը . » ու այն

ատեն կրնանք վստահ ըլլալ Փրկչի սոյն աստուածային, փառաւոր խոստման եւ անփոփոխ պատգամին վրայ, «Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր, տէր մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ ասնէ զկամս հօր իմոյ որ յերկինս է» :—

Երուսաղեմ .

\*\*\* ԱՐԵՂԱՅ.

### ԱՂՕԹ 3

ԳՐԵԱՅ ԳԵՈՐԳ ՊԶԱԳՃԵԱՆ

Ուսանող Աստուածաբանութեան ի Մէդֆրդ Ամբրիկայի

Աղօթքը բառին ընդարձակ նշանակութեամբ հոգւոյն Աստուծոյ հետ ունեցած հաղորդակցութիւնն է : Աղօթքն է միակ միջոցն որով կրնանք գիտել Բարձրելոյն : Հաղորդակցութիւն մ'է որ ժամանակ մը մարդս ներկայ աշխարհէն աւելի բարձր միջնորդութի մը մէջ փոխադրուելով՝ հոգեկան վստահութեամբ ու քաղցր հաճոյք մը կը զգացնէ մեզ : Առ Աստուած պարտականութիւն մը ըլլալէ զատ, — ինչպէս շատ մը գիտուններ կը սահմանեն, — հոգեկան ու բարոյական ցանկալի միջնորդութիւն մ'է, զոր փոխանակել անկարելի է :

Աղօթք բառի սահմանին տակ կ'իյնան եկեղեցական երգեցողութիւնք, ծիսակատարութիւնք, երկրպագութիւն եւ այլ զանազան եղանակներ, զորս տարբեր ժողովուրդներ տարբեր ժամանակներու մէջ այլ եւ այլ ձեւակերպութիւններով կատարած են : Բայց այս բոլոր աննման եղանակները իրենց ձեւակերպութիւններով երկրորդական կարեւորութիւն ունին, թէպէտ արդարեւ իւրաքանչիւրը իւր տեղոյն ու պարագային համեմատ իւր օգուտն ունեցած է, եւ միշտ ունենալէ չպիտի զազրի :

Աղօթից էական կէտն է Աստուծոյ հետ համարձակ հաղորդակցութիւն ունենալու ամենապարզ կերպն ընտրել . զԱստուած մեր հայրը ընել : Եւ արդէն ինքն պատրաստ է եւ միայն մեր ընտրողութեան կըստատէ : Սակայն այս ընտրողութիւնը ինչպէս պիտի ընենք, եւ ինչպէս պիտի վստահ ըլլանք թէ Աստուած մեզ կը լսէ : Սոյն հարցումներէն մանաւանդ վերջինը առարկութեանց առիթ տուած է յաճախ . բայց եթէ առաջինին պատասխանը ուղիղ կերպով ըմբռնուի եւ ըստ այնմ շարժուի, երկրորդն

ինքնին կըլուծուի :

Քրիստոս զինքն, որպէս եւ զՀայրն Աստուած, մերը ընելու եւ մեր հոգին իրեն բնակարան յարգարելու միակ միջոցը տուած է, որ է՝ «Հաւատալ իրեն, սիրել զինքն եւ իւր պատուէրները պահել» : Ուստի մեզ կըմնայ միայն ջանալ անկեզծ հաւատով ու անհուն սիրով ընդգրկել զՔրիստոս, նորա պատուէրները, որոնք հասկացողի համար դժուար չըլլալէ զատ՝ անհուն հաճոյք կըպատճառեն, կատարել. մեր հոգին, որ միայն կրնայ որոշուիլ իբրև բնակարան Հոգւոյն Սրբոյ, մաքրել ու պատրաստել՝ մեր Տէրն ընդունելու համար, եւ զինքն մեզմէ հեռացնելու որ եւ է առիթ չտալէ զգուշանալով՝ բոլորովին իւրացնել, եւ այսու տէր ըլլալ այն երկնային գանձուն որ ամեն ինչ կըպարունակէ իր մէջ, եւ որ եւ է տարակոյսի տեղի չի թողուր :

Արդ, այսպիսի տրամագրութեան մէջ դանուող մի անձին աշօթից անլսելի մնալն մի՞թէ մաքէն իսկ կ'անցնէ : Այսպիսի հաւատոյ տէր անձի մը համար՝ իւր խնդիրը մերժուած տեսած ատենը, միթէ դժուա՞ր է երեւակայել որ իւր խնդիր «չարաչար» էր, Քրիստոսի գործածած բառովն : Հինգ տարեկան մանուկի մը արարքը լաւ կրնայ լուսաբանել զայս : Մանուկը երբ դեռ ընտանեկան անձուկ սահմանին մէջ իւր հօր կամ մօր ամենակարողութեան հաւատալէ զատ իրենց սիրոյն վերայ բնու չտարակուսիր, անգամ մը սիրուն զմեղիի փայլուն ու հրապուրիչ տեսքէն կախարդուելով՝ կ'ուզէ զայն ձեռք անցնել : Մօրմէն արտօնութիւն կըխնդրէ եւ բնականաբար կըմերժուի վասն զի մանուկը միայն իւր հաճոյքի գոհացումը 'ի նկատի առած էր, մինչդեռ մայրը այդ գոհացումը կատարելու եղանակէն յառաջ դալիք վտանգի հաւանականութիւնը նախադրացած էր : Ո՞վ պիտի դանդաղի հաստատել թէ մայրը աղոթար դատած էր : Միթէ կարելի՞ է մանկան մը չափ տկար դատողութիւն ունենալ եւ անոր պէս տրամջիլ՝ զրկուած կարծելով :

Դարձեալ միթէ կրնա՞նք ըմբռնել թէ Աստուած ի՛նչ կերպով կըկատարէ մեր խնդրուածն : Հա՞րկ է միայն սպասել ուղղակի միջոցներու : Պէտք է գիտնանք որ նա ունի անուղղակի միջոցներ որոնք աւելի շահաւոր են մեզ համար : Օրինակի աղադաւ երբ բոլորովին յուսահատ անգործ երիտասարդ մը պատուաբեր միջոցաւ իւր ապրուստը

ճարելու. ամեն ճիգ թափելէ վերջը գոնէ անօթի չմտնելու. համար առ ժամանակ մի մուրացկանութիւն ընել որոշելով՝ կրդիմէ քրիստոնեայ անձի մը, որ յիշեալ երիտասարդի վիճակը լաւ տեղեկանալով, փոխանակ խընդրած փոքրիկ ողորմութիւնը տալու, կ'առաջարկէ իւր պարտիզին մէջ մշակութիւն ընելով օրինաւոր օրական ստանալ եւ այսպէսով իւր պէտքերը հոգալ:

Այժմ ձեզ պիտի հարցնեմ. ո՞րը աւելի նախընտրելի է աշխատասէր եւ իւր պատւոյն տէր երիտասարդի մը համար: Անշուշտ երկրորդ կերպը, որ էր անուղղակի պատասխան մը իւր խնդրանաց: Դեռ այսպիսի շատ կերպեր կան որոցմով Աստուած կըզործադրէ իւր կամք, եւ որոնք մեր հասկացողութենէն վեր են:

Ահա կըտեսնենք որ ամեն ինչ մեր հաւատոյ չափէն կախումն ունի. ուստի մեզ կըմնայ մեր հաւատքը զօրացնել, որ միայն զօրաւոր հոգւոյ մը արդիւնք է, եւ այդ զօրաւոր հոգւոյն ալ տէր ըլլալու համար պարտաւոր ենք իրեն պէտք եղած սնունդն հայթայթել, որ է յարատեւ աղօթք, եւ է միակ ճամբան մեր հոգին ամենաբարին Հոգւոյն հետ յարաբերութեան մտցնելու: Ի՞նչ մեծ մխիթարութիւն՝ զգալ թէ իրական եւ կենդանի յարաբերութեան մէջ ենք աշխարհի Արարչին հետ: Երեւակայէ այն ժամերն, եւ եթէ փորձած չես՝ փորձէ, երբ աշխարհային ծանր բեռներու տակ ընկճուած, հոգերու եւ տառապանքներու քառսին մէջ ընկղմած, երբ այլ եւս չի երեւիր որ եւ է աշխարհային յոյս, քաշուէ սենեակդ, ամփոփէ միտքդ եւ բարձրացուր հոգիդ դէպ ի նախախնամողը, յանձնէ ինքզինքդ բոլորովին իրեն խնամոց, խոստովանէ իր անհուն մարդասիրութիւնը, հայցէ իր օգնութիւնը, եւ պիտի տեսնես թէ անհաւատալի արագութեամբ միտքդ պաշարող բոլոր այն դժուարութիւնք պիտի փարատին եւ բոլորտիքդ տիրող այն ապականեալ մթնոլորտը պիտի զտուի եւ անգամ մը մխիթարութեան այս քաղցրութիւնը վայելելէ վերջ պիտի վկայես թէ որ եւ է ուրիշ վայելք չի կրնար նոյն հաճոյքն ընծայել զոր միայն աղօթքը կրնայ ընել:



### ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

[ Սոյն վերնագրի ներքոյ դրուած փոքրիկ յօդուածներն նպատակ ունին քրիստոսի վարուց վերայ մի կարգ պարզ դասերի ծրագ իրնէր ներկայացնել յորոցմէ կրօնուսոյցք կարեն օգտուիլ . աւելցնելով քերեւս ուրիշ ինչ որ իւրաքանչիւր պարագային յարմար երեւի: Ոչ ինչ նուազ օգտակար կարեն լինել նաեւ քարոզչաց, որք իբրեւ նախապատրաստուց իւրն օոյն կամ սոյնպիսի ծրագրաց վերայ քերեւս յօծարին իւրեանց քարոզներ դասաւորել: ]

### ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

Ս. Գրոց մէջ շատ քիչ տեղեկութիւն կը դառնենք Յիսուսի մանկութեան մասին . վասն զի Աւետարանի դիւխաւոր նպատակն է՝ նորա գործունէութիւնն իբրև ուսուցիչ և Փրկիչ նկարագրել . այսինքն, նորա եռամեայ քարոզութեան, չարչարանաց և մահուան դէպքեր աւանդել աշխարհի: Բայց և այնպէս յիշուած են երկու դէպքեր նորա մանկութեան մասին որ կարի հետաքրքիր են. —

1. Բեթղեհէմի անմեղ մանկանց կոտորածն եւ Յիսուսի փախուստն յեգիպտոս:—Յիսուսի ծնունդէն քիչ յետոյ Հերովդէս հետամուտ էր զայն սպանանելու (Մատթ. Բ 8): Այլ Աստուծոյ առաջնորդութեամբ Ս. Աստուածածին և Յովսէփ առին զՍուրբ Մանուկն և փախան յեգիպտոս (Մատթ. Բ 14): Հերովդէս կը վախնար թէ մի գուցէ Յիսուս իբրև Դաւթի սերունդ հրէից արքայական աթոռը ժառանգէր: Հերովդէս ինքն մի դոռող և անիրաւ թագաւոր էր, և հետեալար ժողովրդէն սիրուած չէր. ուստի իւր երկիւղն ևս անտեղի չէր: Իւր չար նպատակը գործադրելու համար, նախ կեղծաւորութիւն ՚ի գործ դրաւ՝ խնդրելով Մոգերէն որ երբ զարքայածին մանուկը գտնեն՝ իրեն իմացնեն որպէս զի ինքն ևս իւր յարգանքը մատուցանէ նմա: Բայց Աստուած ընդդիմացաւ և թոյլ չտուաւ որ Մոգք վերադառնան յերուսաղէմ:

ԽՐԱՏԱԿԱՆ 1. Մեղապարտ խղճի արդիւնքն է անիրաւութիւն և երկիւղ ու կասկած . Յովհ. Ը 9:

2. Աշխարհիս գործերն Աստուծոյ տնօրէնութեան ենթակայ են:

3. Դժուարին է Աստուծոյ դէմ մաքառել. Գործ. Ե 39:

2. Միւս դէպքն է՝ երկոտասանամեայ մանուկն Յիսուս ի տաճարին:—Հրեայք սովոր էին իւրեանց զաւակներ տաճարը բերել և մովսէսական տօներու և սովորութեանց մասնակցելու վարժեցնել:

Հրէից երեք մեծ տօներն էին (1) Զատիկն, (2) Պենտէկոստէից Տօնն, (3) Տաղաւարահարաց տօնն:

Յիսուս իւր մօր հետ երուսաղէմ կ'երթայ Զատիկի տօնը կատարելու համար:

ԽՐԱՏԱԿԱՆ 1. Մանուկներ իրաւունք ունին Աստուծոյ պաշտօն

մատուցանելու որպէս չափահաս անձինք:

2. Մեծ շնորհ համարելու ենք, որ կըներուի մեզ Աստուծոյ տանն սրբազան պաշտամանց մասնակից կամ ներկայ լինիլ:
3. Սուրբ Մանուկն Յիսուս մեզ համար այս մասին բարի օրինակ մի է:

Վերոյիշեալ Զատիկի տօնը մեկ շաբաթ տեւեց, և յետայնու տէրունական ընտանիքը վերադարձաւ 'ի Նազարէթ: Ի վերջոյ իմացան որ Յիսուս իւրեանց հետ շէր: Ուստի վերադառնալով յերուսաղէմ գտան զնա տաճարին մէջ, որ զպրաց և վարդապետաց հետ կըխօսակցէր աստուածային իրաց վերայ: Ամենէն մեծ վարդապետն նա ինքն Մանուկն Յիսուս էր, որ այժմ կ'ուսուցանէ զմեզ, իւր ժողովուրդն, (1) իւր Սուրբ Եկեղեցւոյ միջոցաւ, (2) իւր Սուրբ Գրոց միջոցաւ, (3) և իւր Սուրբ Հոգւոյն միջոցաւ: Դպիրք և վարդապետք զարմացած էին նորա պատասխանների վերայ, քանզի բոլորովին տարբեր գտան զնա իւրեանց սովորական աշակերտներէն:

Յիսուսէն կ'ուսանիմք, (1) Յօգարութեամբ լսել և ուսանիլ մեր մօծերէն և ուսուցիչներէն, (2) և միշտ հետամուտ լինիլ կրթութեան և իմաստութեան:—Երբ նորա մայրն և Յովսէփ գտան զնա 'ի տաճարին, յանդիմանեցին զնա յետ քնալուն համար, որով սրտնեղութիւն պատճառած էր իւր ծնողաց: Իսկ նա կըպատասխանէ. «Զի՞ խնդրէիք զիս. Ո՞չ գիտէիք եթէ 'իտան հօր իմոյ պարտէ ինձ լինել»: Դուկ. Բ 49: Ո՞վ էր նորա հայրը: Ոչ թէ Յովսէփ ա ը Մարեմայ, այլ Ամենակալն Աստուած:

Կ'ուսանիմք Յիսուսէն թէ մենք ունիմք մի երկնաւոր Հա՛ր: Մենք ևս Աստուծոյ զաւակներ եմք, բայց ոչ մի և նոյն կերպիւ ինչպէս Յիսուս Բրիստոս: Մենք Աստուծոյ սրգիք եմք որդեգրուած թեամք. նա է Միածին Որդի Աստուծոյ:

3. Երրորդ ակնարկուցին ևս կըզմեմք Աւետարանի մէջ Յիսուսի մանկութեան մասին, այն է Յէ «էջ ընդ նոսա (այսինքն ընդ Մարիամու եւ Յովսեփայ), եւ էր նոցա հնազանդ»:—Ինչ մեծ օրինակ մանուկների համար.— Որդի Աստուծոյ Բարձրելոյն կըհնազանդի իւր հողեղէն Մօրն: Յիսուսի օրինակելի յատկութիւններն էին լինել (1) հնազանդ, (2) հեզահամբոյր, (3) վարքով սիրալիւր. (3) քաղցրաբարոյ:

Նա անշուշտ Յովսեփայ հիւսնութեան գործարանի մէջ կ'աշխատէր. օրինակ արդար վաստակի և աշխատասի ութեան:

Այս գեղեցիկ օրինակին ի՞նչպէս հետեւելու ենք:—Շնորհօք Հոգւոյն Սրբոյ:

## ԲԱՆԻ ԽՐԱՏԱԿԱՆԻ ՍԵՆԵԿԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ՀԱՌԱՔԵԱՅ ԱՐԺ • ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Կ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :

## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քանի որ դեռ դրական օրէնքներ չկային, մարդիկ իրենց սրտի մէջ քանդակուած բնական օրէնքով կը վարուէին, ըստ վկայութեան Ս. Պօղոսի թէ՛ « Հեթանոսք՝ որք զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք : Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց : » Եւ անա այս բնական օրէնքով շատ իմաստասէր մարդիկ շատ բնական ու բարոյական օրէնքներ կ'արգացին իրենց սրտին վրայ, եւ զանոնք մագաղաթներու վրայ գրեցին, որպէս զի ամեն ընթերցողներ ու լսողներ կարենան ըմբռնել ու միտք առնել թէ ի՛նչ են առաքինութեանց օգուտներն, ու մտլութեանց վնասները մարդոց համար :

Բնական օրէնքին ուղեցոյցը մարդու միտքն է, որ խըղձի ազդեցութեամբ ճանչնալ կուտայ մարդուն իր գործած առաքինութիւններն, որք երջանիկ կընեն զմարդ բարոյապէս, եւ ունեցած մոլութիւնները, որոնք զմարդ վերջի աստիճան թշուառ կ'ընեն թէ հոգեպէս, եւ թէ մարմնապէս : — Այս բարոյական խրա ուսուցանելն մին էր Հռովմայ կայսրն Մարկոս Աւրելիոս, որոյ գեղեցիկ խօսքերն հանդիսիս նախորդ թիւերուն ընթերցողք կարգացին : Այս անգամ մի ուրիշ իմաստասիրի խօսքեր կը ներկայացնեմ ընթերցողին. այն է՝ Հռովմայեցւոյ նշանաւոր իմաստասէր Սենեկայի խօսքերէն մի քանի գեղեցիկ քաղուածներ :

Սենեկա ինքն ի Սպանիա ծնուած էր Քրիստոսի ծընուելէն մի քանի տարի յառաջ : Անոր հայրն ալ հռետոր եւ իմաստասէր ոմն լինելով՝ ի մանկութենէ լաւ դաստիարակուեցաւ նախ իւր հօր մօտ եւ ապա Ստոյիկեան կոչուած ազանդի վարժապետաց՝ Սոկրոնի եւ Փոսիդոսի մօտ, որով եւ ինքն Սենեկա ստոյիկեան վարդապետութեանց եւ սովորութեանց մէջ վարժուեցաւ, այսինքն, ըստ այն ժամանակի զաղափարաց, առաքինի եւ բարոյաւէր որպէս եւ խստակեաց եւ սակաւապէտ կեանք վա-

րելու սորվեցաւ : Դոմետիանոս կայսեր որպէս նորա  
այրւոյն Ագրիպինայ շատ սիրելի էր Սենեկա . եւ այս  
պարագայն իսկ բորբոքեց Կալիգուլայ կայսեր նախանձն  
անոր զէմ, որ կայսերական գահը բարձրանալուն պէս  
զՍենեկա աքսորեց ի Կորսիկայ խուժազուժ մարդոց մէջ ,  
ուր երկու տարւոյ շափ մնաց՝ ամբաւ նեղութեանց  
եւ թշուառութեանց համբերութեամբ տանելով : Յետ  
մահուան Կալիգուլայ , անոր յաջորդն Կլաւդիոս՝ Ագ-  
րիպինայ այրիացեալ կայսրուհւոյն հետ ամուսնանալով՝  
ասոր ազգեցութեամբ զՍենեկա աքսորանքէն կրկերա-  
դարձնէ եւ իւր Ներոն որդւոյն ուսուցիչ կըկարգէ գնա :  
Ներոն՝ Հռովմայ կայսր դառնալով յամի 54, իսկզբան  
իւր ստացած դաստիարակութեան համեմատ կ'ընթանայր,  
եւ զՍենեկա արքունեաց մէջ պահելով՝ յաճախ անոր  
խորհուրդ կընարցնէր եւ անոր խրատներովն կըկտաւ լա-  
րուէր : Բայց հետզհետէ ցոփութեան եւ զեղխութեան մէջ  
իյնալով՝ սկսաւ Սենեկայէն ձանձրանալ , զայն արհամար-  
հեց եւ այն աստիճան թշնամացաւ անոր հետ որ փորձեց  
զաղանի դեղամահ սպաննել տալ զայն , բայց չյաջողեցաւ :  
Յետոյ պատճառ մը հնարեց՝ իբր թէ Սենեկա՝ կայսեր  
կենաց զէմ դաւաճանութիւն գործած ըլլայ , եւ մահուան  
դատապարտեց իւր անպարտ ուսուցիչն , միանգամայն  
արտօնութիւն տալով որ իւր սպանման կերպն ինքն Սե-  
նեկա ընտրէ : Սենեկա իւր բազկերակն կտրել տա-  
լով՝ ուզեց արիւնհոսութեամբ մեռնել . բայց մահն երկա-  
րելով՝ թոյն առաւ , որ սակայն արեան պակասութեան  
պատճառաւ՝ չներգործեց : Ապա զինքն տարին ջերմ բաղնիք  
մը ուր հեղձամահ զրաւեցաւ ի կենաց , ի յաւիտեական նա-  
խատինս իւր սպերախտ աշակերտին , որոյ անդթութիւններ  
իւր հպատակաց զէմ առածի կարգ անցած էին , եւ նորա  
մեռնելէն շատ տարիներ վերջ քրիստոնեայք դեռ երկիւ-  
ղով կըչնջէին թէ «Նեոն (այսինքն Ներոն) դայ» :

## Ա

### ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ .

Ուրիշ կիրքերը ծածկելու եւ պատսպարելու հնար  
կայ , բայց բարկութիւնը երեսներուն վրայ ցոլանալով՝  
յայտնի խայտառակ կ'ընէ զմարդ . եւ որչափ սաստիկ

լինի, այնչափ մեծարորոք կը տեսնուի:

Չկայ այնպէս ահուելի ու դաժան կենդանի մը՝ որու բարկացած ատեն դաժանութիւն մ'ալ յաւելցած չլինի վրան:—Աւելի լաւ է յառաջուց մեղմացնել բարկութեան առաջին խլրտուածը, եւ իր բուն սերմերը խեղդելով շուտով փախչիլ անկէ:—Որովհետեւ ուր որ կիրքերը ներս մտնալու տեղ գտնան, հոն բանական ընտրողութեան տեղ չի մնար:—Բարկութիւն օգտակար է, եթէ չափով ըլլայ:

Որչա՛փ շատ անձինք վնասուած են նոյն իսկ բարկութենէն: Ոմանց երակները պայթեցան սաստիկ բռնանալնուն պատճառաւ, ուրիշներու արիւնը բերաններուն մէջ վազեց՝ բոլոր ուժով պոռալնուն պատճառաւ. ոմանց մաղձային աւիւնը դէպ ի վեր վազելով՝ աչքերնին կուրցուց. եւ այլոց վրայէն նոր գացած հիւանդութիւնը կրկին վրանին վերադարձուց:—Ազահութիւն ապրանքներ կը հաւաքէ եւ կը դիզէ, բայց դէ՛ թ զանոնք ուրիշ մը կը վախէ. իսկ բարկութիւն ամենքը կը վատնէ եւ կ'ոչընչացնէ, եւ քիչ ու չնչին մաս մը հազիւ թէ մնացած լինի անկէ:

Քեզ վնաս հասցնողը՝ կա՛մ հզօրագոյն մէկն է, կա՛մ տկարագոյն. եթէ տկար է, անոր խնայէ. իսկ եթէ հզօր՝ խնայէ քու անձիդ:—Ո՞վ ոք բարկութեան ու մոլեգնութեան ցաւերուն անձնատուր եղաւ, ու խոհեմութիւնը շուտով մէկ կողմը չը դրաւ իր անձէն. ո՞վ ոք իր կրից զօրութենէն յուզուելով ուրիշի մը վրայ յարձակեցաւ, ու չանարգեց իրեն յարգն ու պատիւը:—Քանի որ զեռ գործի մը ձեռնարկութիւն շեւ ըրած, անձիդ վրայ նայէ՛. եւ ինչ բանի որ պիտի սկսիս, զօրութիւնդ կը շէ. որ չըլլա՛յ թէ գործն անյաջող երթալուն պատճառաւ զղջաս ու ցաւիս:

Բարկութիւնը շատ անգամ դէպ ի մեզ կուգայ, եւ ավելի շատ անգամ մենք անոր ետեւէն կ'երթանք. ոչ թէ միայն օրէնք չէ գայն մեզի հրաւիրել, այլ անոր մտախնայէն ալ խորշերու է:—Թէ որ նախ դու չյաղթես բարկութեան. վերջ նա՛ քեզ պիտի յաղթէ:

Ներե՛նք անմիտ անձին, տեղի՛ տանք իմաստուն անձին, եւ ամենուն այս պատասխանը տանք. մարդիկներէն իմաստուններն անգամ յաճախ կը սխալին. չկա՛յ այնպէս աչալուրջ անձ մը՝ որ բնաւ չքնանայ. չկա՛յ այնպէս խելացի ու հարուածներէն չչիթթուող անձ մը, որ յանկարծ դիպուածէ մը յուզուելով չգրգռի. չկա՛յ մէկու մը վնաս տալէ զգուշացող այնպէս անձ մը, որ իր խոյս տուած

ատեն փորձանքէ չը բռնուի:— Մի թէ խոհեմութիւն է աքցի զարնող ջորիին աքցի զարնելը, ու խածնող շունը խածնելը:— Գովածդ մարդն ատելը չար ու վատթար գործ է, բայց աւելի վատթարագոյն է, եթէ զա՛յն ատես որ մանաւանդ գթութեան արժանի է:

Յուլեր կարմիր գոյն տեսած ատեն կըզայրանան. քարը օձեր շուքերէն շփոթուելով կանկ կ'առնուն. արջեր ու առիւծներ ճերմակ կտաւէն կը խրտչին. եւ ամեն կատաղի գազաններ բնականաբար վախ ունին չնչին բաներէն: Նոյնպէս ալ տկարամիտ մարդոց կըպատահի, որ քիչ մը կասկածանքէ այնպէս կըզրգուտին ու կըզայրանան, մինչեւ երբեմն երախտեաց սակաւութիւնը զրկանք կըհամարին իրենց:— Թէ որ ամենքէն վեր գտնուեցար՝ անո՛ր համար ուրախ եղիւր, որ նախապատիւ ես բարեկամիդ սրտին մէջ. իսկ եթէ շատերէն վար ես, այն ատեն նայէ՛ թէ քեզմէ վար եղողները՝ քան զքեզ վեր եղողներէն որչա՛փ շատ են:— Բարի մարդը խրատուելուն համար ուրախ կ'ըլլայ. իսկ չարը կըխոժոռի զինքը յանդիմանողին վրայ:

## Բ

### ՄԻԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Յանկութիւնը՝ «բա՛ւ է», երբէ՛ք չըտեր. բնութիւնը քիչով կըբաւականանայ:— Տրաւութիւնը տանդ մէջ գիմացդ կեցած է. որչափ Աստուծոյ առաջ աղօթքի կենաս, անիկայ քեզ չի կրնար մօտիկնալ:— Ամեն արարածներն իրենց վերջի օրերնուն կըսպասեն... մէկն իր կենաց շրջան կէսը հասցուցած ատեն կիցնայ կը մեռնի. մէկը՝ նոր ծնած ատեն. ուրիշ մ'ալ խոր ծերութեանը հասած, կեանքէն յոգնած ու տաղտկացած ըլլալով՝ մահուանը կը ցանկայ. եւ հազիւ կ'աղատի իր ցաւալի կեանքէն. մէկը շուտ՝ մէկալն ուշ, սակայն ամենուս ալ վախճանը մի եւ նոյն է:— Մարդս ի՞նչ է՝ բայց թէ սկար ու դիւրեղծանելի մարմին. ի բնէ մերկ ու անպատուար. այլոց օգնութեան կարօտ, բախտի ամեն արկածներուն ընդունարան... անբաւական ցուրտին, տաքին եւ աշխատութեան Տղայութիւնը մանկութեամբ կըվերնայ, մանկութիւնը՝ պատանեկութեամբ, պատանեկութիւնը՝ երիտասարդու-

թեամբ, երիտասարդութիւնը՝ ծերութեամբ: — Ով որ այլոց ունեցածին աչք կըզարնէ, իր ունեցածին չի հաւնիր:

## Գ

## ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Տեսչութիւն մը կայ, որ ընդհանուր աշխարհքը կը կառավարէ, ու զմեզ ամեն պիտոյքներով կըխնամէ:

Կրակը զոսկին կըմաքրէ, վշտակրութիւնն ալ՝ առաքինի անձը:

## Դ

## ՀՈԳԻՈՅ ԱՆԴՈՐՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Մեր անձնահաճութիւնն աւելի կըվնասէ մեզ, քան թէ օտարի մարդահաճութիւնը: — Որչա՛փ ախորժելի է բարի խղճմտանաց բարիքը: — Ոչ ինչ բան մը այնպէս կը զուարթացնէ զհոգին՝ ինչպէս քաղցր ու հաւատարիմ բարեկամութիւնը: — Որքա՛ն բարի են ա՛յն սրտերը, որոնք պատրաստ են հաւաքել իրենց մէջ ա՛յն գաղտնիքը, որոց հաստատ խղճմտանաց վրայ աւելի վստահ ես, քան քուկիդ վրայ: — Հիւանդութեան սկիզբը՝ առողջները հիւանդներուն հետ խառնելն է: — Ունեւորի մը լաւագոյն կացութիւն այն է՝ որ ոչ բոլորովին աղքատութեան մէջ ընկզմի, եւ ոչ ալ աղքատութենէն շատ հեռու գտնուի:

Սորվի՛նք մենք մեր մարմնոյն ծանրութիւնը վերցնել, եւ մեր ուտելիքն ու հագնելիքը նոր նոր օրինակներով չպատրաստե՛նք, ինչպէս որ մեր նախնեաց ունեցած կացութիւններն զմեզ կըխրատեն: — Ով որ շուտով զինքը կ'ընտելացնէ ծանրութիւններ կրելու, այն սովորութիւնը՝ թշուառութեանց դեղ կուսենայ իրեն համար:

Թէ որ ձախորդութեանց բուռն զօրութիւնն առաջուան պէս շարունակուէր մինչեւ վերջ, բնաւ համբերող մէկ մը չի պիտի գտնուէր: — Կրօնասէր ու սուրբ մարդը հաստատուն կըպահէ իրեն աւանդուած օրէնքները:

## Ե

## ԳԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ :

Գեղը հիւանդաց համար հնարուած է, բայց առողջաց քովն ալ յարգի է. նմանապէս գթութիւնն ալ թէպէտ պատժապարտ անձինք օգնութեան կրկանչեն, սակայն անմեղներն ալ զայն կրպաշտեն: — Գթութիւնն աւելի վայելուչ է թագաւորի կամ իշխանի, քան թէ հասարակ ժողովուրդին: — Կնամարդի է ա՛յն՝ որ բարկութեամբ կըմոլեգնի. ցած ու զածան գազաններն ալ ոտքերնուն տակն ինկածը կըխածատեն, բայց վեհ փիղերն ու առիւծները՝ գետին ձգածնին զանց կ'ընեն կանցնին:

Գթութիւնը կ'ապահովէ թագաւորի փրկուիլն առանց պահապանի: — Առաքինութիւնն առաքինութեան չկրնար հակառակիլ:

## Զ

## ԵՐՁԱՆԻԿ ԿԵՆԱՅ ՀԱՄԱՐ :

Հոգևոյ բարիքը հոգին կըճանաչէ: — Աւելի կուզեմ բարեգործութիւն մը ունենալ իմ ներսս, քան թէ դուրսէն այնպէս երեւնալ այլոց աչաց: — Դուրսէն փայլուն՝ ու ներսէն ողորմելի անո՛նք են, որոնց վրայ մարդիկ զարմանալով կընային, ու իրարու մատով ցոյց կուտան: Խնդրե՛նք՝ ոչ երեւելի բարին, այլ հաստատուն, անփոփոխ եւ ըստ աներեւոյթ մասին գեղեցիկ բարին:

Անդորրութիւն ու մշտատեւ աղատութիւն ա՛յն ատեն կըյաջորդեն, երբոր զմեզ գրգռող ու շփոթցնող ամեն կիրքերը մեզնէ հեռացուցած ըլլանք: — Այն օրն՝ որ մարդուն հեշտութիւն կըբերէ, ցաւեր ալ հետ կըբերէ:

Մէկ մը առանց առողջ ըլլալու երանելի չ'ըլլար. առողջ չէ անիկայ՝ որուն ցանկալի կըթուին վնասակար բաները լաւագոյն բաներուն պէս: — Առաքինութիւնը՝ բարձր ու վսեմ է, թագաւորական է, անյաղթելի ու անաշխատ է. իսկ հեշտութիւնը՝ ցած, անարգ, տկար ու դիւրակործան է, որու թագստոցն ու բնակութիւնը պոռնըկանոցներն ու գինետուններն են: — Հեշտութիւնն ամեն բաներէ կարճատեւ, խաբող ու դիւրատաղտուկ է. որչափ ազան կերպով մարդն անոր յարում ունենայ, անիկայ

այնչափ շուտով ցաւերու կը փոխուի . նաեւ շուտ շուտ զեղջ ու ամօթ անոր տեղ կը յաջորդեն : — Անոր մէջ ո՛չ մեծավայելուչ բան մը կայ , ու ո՛չ ալ պատշաճ է մարդոց աստուածամերձ բնութեանը . այլ ամօթապարտ՝ զազիր ու անարգ անդամոց ծառայելու հնարուած վայելք մի է , որուն վերջ անարգանքն է : — Զուգութիւն ու միութիւնը բոլոր առաքինութիւնները կը իւրընկալեն , իսկ ախտերն ու մոլութիւններ իրենց մէջ կ'երկպառակին :

Ես իմ անձէս այս կը պահանջեմ , որ զերակատար անձանց հետ հաւատար չ'ըլլամ , այլ միայն վատթար անձերէն լաւ գտնուիմ : — Ինչպէս որ իր անձը զէջցնողի մը վնասը միայն իրեն համար չէ , այլ ուրիշներուն . . . նոյնպէս ալ՝ թէ որ մէկը իւր անձին լաւութեան համար աշխատի , նոյն ջանքովն ուրիշներուն ալ օգուտ կը բերէ :

## Է

### ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ :

Երախտիքներ փոխառութեան պէս համարելը՝ գարշելի վաշխառութիւն է : — Բարի մարդու գործ կատարէ , մէկուն՝ ունեցած արգելն քովդ օգնէ . . . միւսին՝ խորհուրդ տալով , ու մէկալին՝ փրկարար խրատներով :

Բարերարութիւնը չէ թէ տուածին կամ ըրածին , այլ սըրտին մէջն է , որ կուտայ ու կ'առնէ : — Լաւ մարդեր բարեպաշտ կ'ըլլան , եւ կրօնասէր են ցորենով ու այլ բերքերով . իսկ չարերը՝ թէպէտ սեղանն արեան վտակներով ալ ողողեն , նորէն ամպարիչտներ են : — Բարերարութիւնն իստ'յնպէս տա'նք , ինչպէս ուրիշէ մը առնել կ'ուզենք . ամենէն յառաջ՝ յօժարութեամբ , փութով ու աներկմիտ ըլլայ մեր տուածը : — Պարգեւը՝ լաւագոյն է շուտով տալ՝ քանի որ տակաւին չէ աղաչուած . վասն զի պատկառոտ մարդու աղաչած ատեն՝ շրթունքը թոթովելու պատճառաւ՝ երեսներն ալ կը կարմրնան ամօթէն . եւ ով որ անոր խնայէ այն ամաչելը , բազմապատկած կը լինի իր պարգեւը : — Բայց շատեր ալ անոնք են , որոնք դառն խօսքերով ու ամբարտաւանութեամբ ատելի կ'ընեն իրենց բարերարութիւնները . . . մինչեւ պարգեւ ուզողն ալ առածին վրայ կը զղջայ : Սակայն աւելի ցաւալին աստ է ,

Եթէ խնդիրն ընդունուելէ վերջ՝ նորէն աղաչել հարկ չիւնի :  
 Փաբիոս Վերրուկը՝ ժանս մարդու անհաճոյ պարգեւը՝  
 քարէ հաց կըկոչէր . զորն որ սովածը հա՛րկ է առնել , ու  
 դառնութեամբ ուտել : — Բարերարութեան օրէնքն այս է  
 երկու անձերու կողմէն . մէկն իր առածը մոռնալ . եւ միւսն  
 երբէք չմոռնալ իր առածը : — Պէտք չէ յիշել մեր տը-  
 ւածը . քանզի ով որ զայն յիշէ , յետ առնել կըպահանջէ :

Բարերարելու ատեն բանէ մը այնպէս զգուշանալու չէ ,  
 ինչպէս՝ ամբարտաւանութենէն : — Սնափառութիւնը մեզ-  
 մէ հեռու թող մնայ , մեր լռելնուս ատեն թող մեր ար-  
 դիւնքներն աղաղակեն : — Երբէք ստակս չեմ տար մէկու  
 մը , զորն որ գիտենամ թէ պոռնկութեան վարձք պիտի  
 տայ , որպէս զի մասնակից չլինիմ անոր անարժան գործ-  
 քերուն կամ խորհուրդներուն : — Չկայ մեծ ու կատարեալ  
 բարերարութիւն մը , զոր չարամիտ անձը չանարգէ , եւ  
 ոչ այնպէս փոքրիկ բարերարութիւն մը , զոր բարեսրտու-  
 թեամբ ընդունող անձ մը չմեծարէ : — Ով որ գէշ աչքով  
 նայի երախտիքներուն վերայ , միշտ տրտնջալու պատճառ-  
 ներ կըգտնայ : — Մտողքները չսիրելն ամբարշտութիւն է ,  
 ու զանոնք չճանաչելը՝ յիմարութիւն : — Ով որ բարե-  
 րարելու փոխարէն հատուցանել կ'աճապարէ , նա ոչ թէ  
 երախտագէտ մարդու սիրտ կըկրէ , այլ պարտապանի մը :

Իրաւ որ ապերախտութիւն ծանր ու դժնդակ ախտ մի  
 է , որ մարդկան ընկերութեան կապը կը խզէ , ու մեր  
 տկարութեան միակ ապաւէն ու նեցուկ միաբանութիւնը  
 բաժնելով կըպատառէ . բայց եւ ա՛յնպէս ամենուն վրայ  
 տիրած է այս ախտը , մինչեւ անոր վրայ բողոքողն ալ  
 ազատ չէ անկէ :

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳՂԻԱՅԷՆ

Արժ. Տ. Թորոս Գահանայ Հովիւ Հայոց Մանչէսթրի.

Ինչպէս անցեալ տարի յայտնած էի Ձեր Արժանապատուութեան, վերջին անգամ Ս. Էջմիածին զանուած միջոցիս Ազգիս Վեհափառ Ս. Հայրապետն բարեհաճած էր իւր բարձր ցանկութիւնն յայտնել ի մասին վերտին հրատարակման Եկեղեցի Հայաստանեայց անուն Ձեր կրօնաթերթին՝ որ երբեմն այնքան ջերմ ընդունելութեան արժանացաւ ի Կ. Պօլիս իւր ճոխ պարունակութեամբք:

Այս անգամ առիթ ունեցանք սրտի գոհունակութեամբ տեսնելու այդ փափաքելի հրատարակութիւնն որոյ վասն մեր անկեղծ շնորհաւորութիւններն յայտնեմք Ձեզ սրբտեռանդն մաղթանօք:

Յոյժ ցաւալի ճշմարտութիւն մը խոստովանած պիտի լինիմք՝ եթէ ըսեմք թէ այժմ ամեն ժամանակէ աւելի պակասած երեւին մեր ժողովրդեան հաւատք, կրօնասիրական զգացմունք եւ եռանդն բարեպաշտութեան, մինչդեռ ամեն ժամանակ եւ մանաւանդ ներկայիս մէջ անոնց պէտքն անհրաժեշտ է, զի փորձութիւնք ո՛րչափ ծանրանան մեր վրայ՝ ա՛յնչափ առաւել պարտիմք ապաւինիլ յԱստուած եւ յուսալ ՚ի նա, որով միայն կարեմք զօրանալ մեր բովանդակ զժբաղգութեանց մէջ:

Այս ոգւով եւ սրբագոյն սկզբունքով վառեալ գործեցին մեր նախնիք եւ առաջնորդեցին Հայ. Եկեղեցւոյ ալիկոծեալ նաւուն խիստ փոթորկալից ժամանակաց մէջ: Աւա՛ղ, սակայն, այսպիսի գաղափարք այսօր ծաղրական երեւին բազմաց՝ որք գոյն չունին հաւատքի, ճաշակն չեն առած կրօնասիրութեան, եւ, երես կըղարձեն այն ամեն խօսքերէ եւ գործքերէ՝ որոնք կը բուրեն բարեպաշտութիւն:

Տխո՛ւր իրողութիւնք . . . . . : Այլ ճշմարիտ քրիստոնեայ հայուն ներելի չէ յուսահատիլ այս երեւոյթէն եւ թոյլ տալ իւր անձին՝ որ ինքն եւս իյնայ նոյն կորստական հոսանաց մէջ եւ այսպէսով իւր կողմանէ՝ եւս նորա ընդարձակման ոյժն աւելցնէ. մեք եկեղեցականքս մա-

նաւանդ պարտականութիւն ունիմք յաւէտ արի գրտնուելու՝ որքան ներէ մեր կարողութիւն, աշխատելով անձանձիր իւրաքանչիւրս մեր սահմանի մէջ՝ ի շինութիւն ժողովրդեան:

Այս տեսութեամբ արդարեւ գովութեան արժանի է Ձեր արժանապատուութիւնն՝ որ իբրեւ քահանայ ծառայելով հանդերձ Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ սիրայօժար ստանձնած էք նաեւ համարուել մի հանգիսի խմբադուլութիւնն՝ որոյ մասին չպակսին Ձեզ ձեռնհասութիւն եւ հմտութիւն: Ուրեմն գործեցէք, եղբայր, անվնաս եռանդեամբ իբրև ժիր մշակ Հայ. Եկեղեցւոյ եւ մեք բոլորով սրտիւ մաղթեմք որ Տէր Աստուած օրհնէ Ձեր աշխատութիւնը եւ արդիւնաւոր ընէ: Ահա յայնժամ ընդունած պիտի լինիք Ձեր վարձքն:

Ողջունիւ սիրոյ, մնամք ազօթարար,  
Մանչէսթր 28 Օգոստոս 1900

ԳԵՈՐԳ ԵՊՍ • ԻԻԹԻԻՃԵԱՆ  
ԱՆՁՆՈՐԴ ԵՆՐՈՎԻՈՅ

Պատուական Տէր Հայր,

Շնորհակալեօք ստացայ ձեր «Եկեղեցի Հայաստանեայց» ամսաթերթը եւ ընթերցայ զայն ամբողջութեամբ: Հա՞րկ է ըսել թէ ընթերցումը որչափ ուրախացուց զիս որով պարտ անձին կըհամարիմ տալ ձեզ իմ շնորհաւորութիւնքս եւ մաղթանքս թերթիդ բարգաւաճման համար եւ աստուածային օրհնութեան ամեն անոնց որք աւա՛ղ գեռ չեն ճաշակած եւ տեսած զի քաղցր է Տէր:

Պիտի ազօթեմ որ Հոգին Սուրբ ուղղէ եւ առաջնորդէ ձեր գործը եւ գրիչը, եւ գործիք ընէ զձեզ հոգւոց փրկութեան որք նստին՝ ի խաւարի . . . :

Անշուշտ ընտիր քարոզներ պիտի զարթուցանեն անտարբեր սրտեր՝ Փրկիչն հիւրասիրելու եւ նորա համար լինելու: Հրճուանօք ընթերցայ «Քարոզ» (\*) որոյ նմանը երբէք չէի լսած հայ վարդապետէ, եւ որոյ մէջ մի բառը

(\*) Յարգոյ նամակագիրն կ'ակնարկէ կրօնաքերքիս Ա յուոյն մէջ հրատարակեալ՝ Ս. Երուսղէմի համբաւաւոր քարոզիչ Գեր. Տէր Մամբէ Էպ. Մարկոսեանի շարագրեալ գեղեցիկ քարոզին, որ «Ի Ս. Ծնունդն Քրիստոսի» վերնագրով ամեն զմարիտ քրիստոնէի ինչպէս ներկայ նամակագրի սրտի եւ հոգւոյ հետ կըխօսի: Իսկ եթէ կըգտնուին այլ ռմանք որ նոյն համբ. քարոզի աւանդ աղբակիս իտրիդածուլիւններէ՝ արդարեւ արգահատելի են նոքա, քայց մեր զարմանքը չեն յարուցաներ:

կ'արժէ ուսումնասիրել եւ մարտել անոնց համար որք իբր արարած Արարչի մը գոյութիւնը չեն կրնար ուրանալ եւ սակայն չեն որդիք Աստուծոյ. — քարոզ մ'է այդ որ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք կըներկայացնէ քրիստոնէից, եւ կ'ազօթեմ որ բազում ընթերցողք « փրկուած հաւատացեալներու » դասնան, եւ լինին « սեփական ժողովուրդ նորոգուած » ըստ բանին քարոզչին :

Մաղթելով կար եւ զօրութիւն, մնամ, քրիստոսաւանդող լուսնիւ .

Մանչէսթր

ՅԱԿՈՒ ԲԱՐԱՂԱՄԵԱՆ

Արժանապատիւ եւ սիրելի Տէր Հայր,

« Եկեղեցի Հայաստանեայց » ի առաջին թիւը մեծ ուրախութեամբ եւ իրական հաճոյքով կարգացինք : Ամենասիրուն փունջ մ'է հոգեւոր պարտիզէ քաղուած :

Այսու կրփութեամ ջերմօրէն շնորհաւորել Ձեզ Ձեր լուսատենջ հոգւոյն շնորհիւ տարած յաջողութեան համար : Կըզձամ որ արգասաւոր եւ բարեբեր հողի վերայ հոսին Ձեր քրտունք, եւ ոսկեղէն հունձքը հրճուեցնեն զՁեզ :

Մաղթելով ամեն յաջողութիւն Ձեր բարենպաստակ գործին, կըմնամ, խորին յարգանօք,  
Մանչէսթր, 3 Ապրիլ 1900 .

ՈՍԿԻ ԶԱԲՐԵԱՆ

Արժանապատիւ Տէր Հայր,

Ճամբորդութեան եւ զբաղմանց պա՛ճառաւ չը կրցալ աւելի շուտ գրել՝ շնորհակալութիւններս յայտնելու « Եկեղեցի Հայաստանեայց » պատուական թերթիդ ուղարկմանը մասին :

Շնորհաւորելով զՁեզ որ յաջողեցաք սոյն օգտակար թերթի հրառարակութեան սկսիլ, ՚ի սրտէ կըմաղթեմ որ կատարեալ յաջողութեամբ ալ շարունակէք զայն : — Կըզձամ թէ հայերը ընդհանրապէս եւ Եւրոպա բնակողները մասնաւորապէս մեծ պէտք ունին կրօնական թերթի մը որ իրենց տեղեկացնէ ազգային եկեղեցւոյ զանազան անցքերը, սորվեցնէ հայոց կրօնքին բուն ոգին եւ ուղղութիւնը, եւ իրենց սրտերուն մէջ վառ պահէ կրօնքի սէրը : « Եկեղեցի Հայաստանեայց » ի առաջին թիւին պարտաւորութիւնը գրաւական մ'է որ արժանաւորապէս սոյն պաշտօնը կատարելու կոչուած է :

Կրկին յաջողութիւն մաղթելով Ձեր ազգօգուտ ձեռ-

նարկին, մնամ, խորին յարգանք,  
Լօնտօն, 18 Ապրիլ, 1900.

ԿԱՐԱՊԵՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

### ՆԱՄԱԿՆԵՐ Ս. ԵՐՈՒՍԱՂԻՄԷՆ

Արժանապատիւ Սիրելի Եղբայր 'ի 'Քրիստոս .

Մեծաւ ուրախութեամբ ընդունեցի վերկենցաղեալ Եկեղեցի Հայաստանեայց ամսաթերթը՝ զոր վերջապէս յաջողած էք կամօքն Աստուծոյ հրատարակել, որ եւ մեծ մըխիթարութիւն եղաւ ինչպէս ինձ, նոյնպէս շատերուն : Ուստի կը շնորհաւորեմք ձեր այդ խիստ կարեւոր ձեռնարկը, եւ մաղթելով Սուրբ Հոգւոյն շնորհքը՝ կը ցանկամք յաջողութիւն, զարգացում եւ ընթերցողաց հոգեւոր արգիւնաւորութիւն :

Ողջունելով զձեզ եւ կարողութիւն եւ յաջողութիւն մաղթելով կը մնամ բարեացակամ ազօթող

ՄԱՄԲՐԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Ս. Երուսաղէմ, 'ի Ս. Յակովբ վանս հայոց, 27 Մարտ 1900

Հոգեզգօն Տէր Հայր,

Տկար գրիչս չէ կարող սրտի զգացմանցս թարգման հանդիսանալ եւ բացատրել այն մեծ ու անկեղծ ուրախութիւնը, զոր ունեցայ 'ի աես Ձեր պատուական կրօնաթերթի, որոյ հրատարակութեան կ'սպասէինք գրէթէ երեք երկար տարիներէ 'ի վեր անդուսպ փափաքով եւ անհամբեր : Աւելորդ է ըսել եւ պէտք ալ չունիք մեզմէ լսելութէ՝ Ձեր այդ հրատարակութեամբ ո՛րպիսի Աստուածահաճոյ եւ ոգեշահ գործ կը կատարէք Ազգիս մէջ, որոյ տառապեալ զաւակները իրենց հոգեւոր եւ բարեպաշտական պապակը զովացնելու համար չունին վճիտ աղբիւր մը 'ի բաց առեալ Ձերդ Ս. Հայրութեան « Եկեղեցի Հայաստանեայց » պատուական կրօնաթերթը : — Եւ քանի որ, հակառակ մեր այնքան աշխատանաց եւ փափաքանաց, հնարաւոր չեղաւ « Սիօն » ի հրատարակութիւն, գոնէ ես իմ մասին կը ցանկայի Ձեր թերթը կրկնապատիկ ճոխ գտնալ, որով մասամբ ալ « Սիօն » ի պաշտօնը կատարած պիտի ըլլայիք : — Բայց ինչ եւ է, Ձեզ ալ չեմ կարող մեղադրել, գիտեմ որ մինակ էք եւ բողբոջաղ . սոս'յր Աստուած, որ հայ եկեղեցականութիւնը, պատասխանելով Ձեր հրաւերին, աշխատակցէր Ձեզ, որով ըստ բաւականին

կրթեթեւնար Ձեր բեռը . սակայն ես ի՛նչ մեղքս պահեմ՝ գործոյն դժուարութիւնը նորէն Ձեր վրայ պիտի մնայ , ուրեմն ՚ի սրտէ կըմաղթեմ Ձեզ համար զօրութիւն եւ կարողութիւն . թո՛ղ Ամենաբարին Աստուած օգնական եւ զօրալիզ ըլլայ Ձերգ Սրբութեան , մի՛ վհատիք :  
Մնամ միշտ Ձերդ .

ՅԵՐՈՎԲԷ Վ . ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Պատուական Ս . Հայր ,

Կրօնաթերթիդ տեղւոյս բաժանորդներ ամենքն ալ մեծ ակնորժանօք կըկարդան Ձեր թերթի կրօնական համեղ յօդուածները : Մենք որ իբրեւ կրօնական ազգ մը կընամարինք զմեզ եւ այդու կըզարծինք , արդարեւ մեծ պակասութիւն մ'էր որ հայերէն լեզուաւ հրատարկուած այդքան բարձրաթիւ թերթերու եւ հանգէսներու մէջ չը կար գէթ մի հատ ժողովրդեան բարեպաշտական եւ կրօնասիրական զգացումները վառ պահող եւ զայն աստուածսիրութեան փրկարար շաւղին մէջ առաջնորդող , մանաւանդ այսպիսի ժամանակի մը մէջ յորում դժբաղդաբար շատ ու շատ նուազած է մեր նախնեաց յստակ , պարզ ու ջեր-տեռանդ հաւատքն եւ կրօնասիրութիւնը , այլ ընդ հակառակը քիչ շատ զարգացեալները աշխարհիկ ազատամիտ դադափարներով սնած՝ ցուրտ եւ անտարբեր , չընեմ ծաղրական , աչօք կընային զէպ ՚ի եկեղեցին եւ եկեղեցւոյ վերաբերեալ ամեն բան . իսկ ազէտ ու ռամիկ ժողովուրդն եւս զուրկ է այնպիսի հոգեւոր հովիւներէ եւ պատիարակներէ որոնք իւրեանց բարձր կոչման գիտակցութիւնն ունենալով՝ իրենց խնամոց յանձնուած հօտին փրկութեանը համար աշխատին :—Ահաւասիկ , Ս . Հայր , Ձեր թերթը ճիշդ յարմար ժամանակին կուգայ այդ պակասը լեցնել : Իցի՛ւ թէ շատերն ՚ի մերազնեայց կարդային եւ օգտուէին . մեր ամենուս փափազն է որ Դուք յաջողութիւն գտնելով՝ հետզհետէ աւելի ճոխ եւ օգտալար հանդիսացնէք :

Այս սեղ բաժանորդներէն շատերը թերթին համառօտութեան համար տրտունջ կըյայտնեն . սակայն ես կընասկնամ թէ այդպիսի գործի մը սկզբնաւորութեան հետ ի՛նչ դժուարութիւններ կապուած կըլինին : Ըմաղթեմ որ յամենուստ ցոյց տուած քաջալերութեանէն եւ համակրանքէն զօրացած , նիւթապէս եւ բարոյապէս , քիչ ժամանակէն յաջողիք աւելի ընդարձակել Ձեր կրօնաթերթը ՚ի հոգեւոր շինութիւն ընթերցողաց բարեպաշտից :

Ճանկալով ամենայն յաջողութիւն, մնամ, զՁեզ միշտ  
յարգող եւ Ձեր ազօթակից,  
Երուսաղէմ, 27 Մայիս, 1900: ՄԵՍՐՈՎԲ Վ. ՆՇԱՆԵԱՆ

### ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Սիրելի Տէր Թորոս,

Ձեր յուզարկած Եկեղեցի Հայաստանեայց կրօնաթերթի Ապրիլի եւ Մայիսի թիւերն յանդիմանս են զոր կարգալով ուրախանամ յոյժ, եւ շնորհակալ եմ 'ի բոլոր սրաէ որ զիս չէք մտռացած: Ձեր այս անգին եւ գովելի ձեռնարկութիւն, որ մեր Եկեղեցւոյ լուսաւորութիւն իբրեւ նպատակ ունի, ինձ որպէս եւ Ձեր բոլոր հայրենակցաց մեծ պարծանք է. ինձ բառեր են պակասում սրաիս զգացումներն այս մասին լիովին յայտնելու. կեցէք... եւ յԱստուծոյ խնդրեմ զի տացէ Ձեզ երկար կեանս, առաւել շնորհք եւ իմաստութիւն, որպէս զի յետայսու գոնէ Ձեր միջոցաւ, այսինքն, Ձեր կրօնաթերթի միջոցաւ, կարենամք ուսանիլ ինչ որ մինչ ցարդ անկարելի եղած է մեզ համար ուրիշ ազբիւրներէ ստուգապէս տեղեկանալ: Ես իմ կողմանէ ցաւով ասեմ որ քառասուն տարին անցանի հասակիցս, եւ մինչ ցարդ չեմ կարողացել ո՛չ հոգեւորականից եւ ո՛չ աշխարհականից Հայոց Եկեղեցւոյ ճիշդ պատմութիւնը լսել, եւ երբեմն եւս զգուհելով դարձած եմ եւ ինձ մխիթարանք համարած եմ թէ ողջ շինուած ի բաներ են: Փառք Աստուծոյ, այսօր այս դժուարութիւնը պիտի բարձուի, որպէս տեսանեմ, կրօնաթերթիդ շնորհիւ, եւ ճշմարտութիւնը պիտի յայտնուի: Յանչափս մխիթարուած եմ Ա. եւ Բ. թիւերն կարգալով:

Եթէ որոք բան կամիք կատարել իմ միջոցաւ, հաւատացէք պատիւ պիտի համարիմ Ձեզ օգտակար գտնուելու: Որով, մնամ, Ձեր բարեկամ,  
Կօնիոս 14 Յունիս 1900

ՅԱՐՈՒԹԻՒՆ Շ. ԿՐԵՏԵԱՆՑ



